ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, հ. LXII, №1, 65-66

ՀԻՇԱՏԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

ՍՈՒՍԱՆՆԱ ՄՈՒՇԵՂԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Ծննդյան 80-ամյակին)

Լրացավ վաստակաշատ գիտնական, պալեոգենի կենսաշերտագրության և հնէաբանության ասպարեզում ճանաչված մասնագետ, ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի հնէաբանության և շերտագրության գիտահետազոտական լաբորատորիայի վարիչ, երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր Սուսաննա Մուշեղի Գրիգորյանի 80-ամյակը (1928-1998):

Ս.Մ. Գրիգորյանը ծնվել է 03.09.1928թ-ին Մեղրիում: 1939թ-ին ընտանիքի հետ տեղափոխվում է Երևան: 1946-1951 թթ-ին սովորում և ավարտում է Երևանի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետը և ստանում կենսաբան-ֆիզիոլոգի որակավորում: Հանգամանքների բերումով, նրան վիճակված չէր շարունակելու իր գործունեությունը ֆիզիոլոգիայի ասպարեզում: Հետագայում նա իրեն ամբողջովին նվիրում է կենսաբանա-երկրաբանական ուղղվածության մեկ այլ գիտության՝ անողնաշարավորների հնէաբանությանը՝ խիստ արդիական և Հայաստանի տարածքում համեմատաբար քիչ ուսումնասիրված ֆորամինիֆերների ենթադասի բրածո օրգանիզմների՝ նումուլիտների և օրբիտոիդների կենսաշերտագրությանը, ինչպես նաև նրանց կարգաբանության և ֆիլոգենեզի խրթին հարցերին:

1952թ-ից մինչև իր կյանքի վերջը, շուրջ 46 տարի անընդմեջ, Ս.Մ. Գրիգորյանը աշխատել է ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտում՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ՝ լաբորանտից և ասպիրանտից սկսած մինչ ավագ գիտաշխատող, հնէաբանության և շերտագրության լաբորատորիայի վարիչ և թեմայի ղեկավար: Ասպիրանտուրայում ուսանելու տարիներին (1956-1959թթ.) ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պրոֆեսոր Ա.Ա. Գաբրիելյանի ղեկավարությամբ, Ս. Գրիգորյանը գիտահետազոտական աշխատանքներ է կատարում Մերձերևանյան և Վայքի շրջաններում, հայտնաբերում և ուսումնասիրում է բրածո նումուլիտների մի քանի տասնյակ ձևեր: Արդյունքները ամփոփվում են "ՀԽՍՀ հարավ-արևմտյան մասի վերին Էոցենի և օլիգոցենի նստվածքների շերտագրությունը և նումուլիտների ֆաունան" ատենախոսությունում, որն էլ 1963թ-ին փայլուն կերպով պաշտպանում է Երևանի Պետական համալսարանում՝ ստանալով երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Իր հետագա գիտական գործունեության ընթացքում Ս. Գրիգորյանը լայնածավալ հնէաբանական ուսումնասիրություններ է իրականացնում Հայաստանի տարածքում՝ հետազոտում վերին կավճի (կամպան, մաաստրիխտ) և պալեոգենի (պալեոցեն, էոցեն, ստորին և միջին օլիգոցեն) հասակների նումուլիտների և օրբիտոիդների ֆաունայով հարուստ մի քանի տասնյակ նոր ստուգանմուշային և շերտատիպային կտրվածքներ, այդ թվում Վայքի մարզի Ուրցաձոր և Ազատեկ գյուղերի շրջակայքի խոշոր նումուլիտներ Nummulites millecaput (120-160 մմ տրամագծով) պարունակող վերին էոցենի և միջին և վերին էոցենը սահմանազատող ստուգանմուշային կտրվածքները:

Կարևոր է նշել, որ Ս.Մ. Գրիգորյանին հաջողվել է հնէաբանական ուսումնասիրություններ կատարել նաև Նախիջևանի շրջանում, որտեղ, ի տարբերություն գոյություն ունեցող պատկերացումների, նրան հաջողվել է առաջին անգամ ճշգրիտ հիմնավորել այսպես կոչված «Փարադաշի» շերտախմբի վերին մասի միջին էոցենյան հասակը: Բացի այդ, միջազգային համագործակցության շրջանակներում համեմատական ուսումնասիրություններ է իրագործել Հունգարիայում:

Ս.Մ. Գրիգորյանը հեղինակ և համահեղինակ է 5 մենագրությունների, 28 գիտական հոդվածների և 10 ձեռագիր հաշվետվությունների: Հոդվածների մի մասը թարգմանվել է անգլերեն և ֆրանսերեն լեզուներով և տպագրվել արտասահմանյան գիտական պարբերականներում: Արժանի է հիշատակման նրա ռուսերեն լեզվով գրված «Հայկական ՍՍՀ նումուլիտները և օրբիտոիդները» ծավալուն մենագրությունը (Երևան, 1986), որը հանդիսանում է հեղինակի բազմամյա գիտական հետազոտությունների հանրագումարը: Այս աշխատությունը 1988թ-ին Մոսկվայի Ս. Օրջոնիկիձեի անվան երկրաբանա-հետախուզական ինստիտուտում մեծ հաջողությամբ պաշտպանվել է որպես դոկտորական ատենախոսություն: Աշխատության մեջ նկարագրվել են վերին կավճի և պալեոգենի հասակի նումուլիտների և օրբիտոիդների ավելի քան 100 տեսակներ և ենթատեսակներ, այդ թվում՝ միայն էոցենի նստվածքային ապարներից գիտության համար նոր 4 տեսակ և 5 ենթատեսակ:

հայտնաբերված դիսկոցիկլինների մի նոր ձև Ս.Մ. Գրիգորյանը անվանել է ի պատիվ իր ուսուցիչ ակադեմիկոս Ա. Գաբրիելյանի:

1980-ական թվականներին Ս.Մ. Գրիգորյանը հանդիսացել է „Էոցենի և օլիգոցենի սահմանագծի երկրաբանական իրադարձությունները" №174 միջազգային ծրագրի համադեկավարներից մեկը: Այդ ուսումնասիրությունների հիմնական արդյունքները նա հրատարակել է 1986թ-ին Մոսկվայում լույս տեսած "ԽՍՀՄ տարածքի ուշ էոցենի-վաղ օլիգոցենի երկրաբանական և կենսաբանական իրադարձությունները" մենագրության համապատասխան բաժնում: Կյանքի վերջին տարիներին Ս.Մ. Գրիգորյանը ղեկավարում էր № 96-107 «Հայաստանի ֆաներոզոյի հնէաբանա-շերտագրական հուշարձանների ատլասը» գիտական թեման:

1960-1970-ական թվականներին Ս.Մ. Գրիգորյանը դասավանդել է նաև Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետում: Երկար տարիներ նա հանդիսացել է ԽՍՀՄ և Կովկասի պալեոգենի միջգերատեսչական շերտագրական հանձնաժողովի անդամ, ԽՍՀՄ հնէաբանական ընկերության անդամ: Բազմավաստակ գիտնականը բազմիցս ակտիվ մասնակցություն է ունեցել պալեոգենի շերտագրությանն ու հնէաբանությանը նվիրված ինչպես Հանրապետական, այնպես էլ Միութենական և Միջազգային գիտաժողովներին:

Ս.Մ. Գրիգորյանը վայելում էր մեծ հեղինակություն ինչպես նախկին ԽՍՀՄ առաջատար գիտնականների՝ Վ.Ա. Կրասենինիկովի, Ե.Կ. Շուցկայի, Գ.Ի. Նեմկովի, Ե.Լ. Պորտնայովի, Մ.Ա. Ախմետևի, Ի.Վ. Կաչարավայի, Ե.Լ. Կուրգալիմովայի, այնպես էլ եվրոպական գիտնականների մոտ: Հատկանշական է, որ Ս. Գրիգորյանի ուսումնասիրությունների արդյունքներն իրենց արժանի տեղն են գտել իսպանացի խոշոր գիտնական Ջոզեֆ Սերրա-Կիելիի 1998թ-ին Ֆրանսիայում տպագրված հիմնարար աշխատության մեջ՝ նվիրված Թեթիսի պալեոգենի խոշոր ֆորամինիֆերների զոնալ կենսաշերտագրական սանդղակի (SBZ), ճշգրտմանը:

Բազմավաստակ գիտնականի, գիտության անխոնջ մշակի և մարդկային բարձր հատկանիշներով օժտված անձնավորության հիշատակը մինչ հիմա վառ է մնում նրա գործընկերների, աշակերտների և բոլոր նրան ճանաչողների սրտերում:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
ՀՀ ԳԱԱ Գիտություններ Երկրի մասին տեղեկագրի խմբագրություն